

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԵՍՊԱՆՆԵՐԻՆ

(6 հունվար 1994 թ.)

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ:

Ուրախությամբ կողջունենք ավետիսը Քրիստոսի ծննդյան և պատգամը երկնքի հրեշտակների՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Կարծում ենք, որ ավելի քան երբեք մեր օրերի մարդկությունը, ժողովուրդները կարիք ունեն լսելու և կյանքի կոչելու այս պատգամները:

Եվ հատկապես մեր ժողովուրդը, հայ ժողովուրդը կարիք ունի խաղաղության և փոխադարձ հաճության իր զավակների միջև: Մենք մնում ենք միշտ աղոթող խաղաղության հաստատման ի Հայաստան և հԱրցախ:

Այս խոհերով շնորհավորում ենք այստեղ ներկայությունը մեր Հանրապետության հարգարժան նախագահի և մեր պետական իշխանությանց ներկայացուցիչների, ցանկանալով նրանց լիակատար հաջողություններ իրենց հայրենաշեն առաքելության ճանապարհին 1994-ի ընթացքին:

Խորին հարգանքով ողջունում ենք նաև բարեկամ պետությանց հարգարժան դեսպաններին, որոնք բարի եղան պատասխանելու մեր հրավերին և ներկա լինելու Մայր տաճարի սրբազան արարողություններին, Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնախմբության առթիվ:

Շնորհակալություն բոլորին: Նաև Մեր աղոթքն է, որ Տերը մեր բարեկամ պետությանց և ժողովուրդներին պարգևի իր կենարար շնորհները խաղաղության և բարգավաճման:

Ձեզ և մեզ մեծ ավետիս՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ